Մեղրիի շահարկումը ոչինչ չի տա

ԻՇԽԱՆ ԻՇԽԱՆՅԱՆ

Լրանում է 1999 թվականի հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած աննախադեպ իրադարձության մեկ տարին: Լավագույն առիթ է նոր լիցք հաղորդելու ներքին անկայունությանը՝ փորձելով ամեն մի հնարավորություն օգտագործել իշխանություններին ու քաղաքական ուժերին վարկաբեկելու համար:

Այս անգամ էլ առիթ ծառայեց հոկտեմբերի 27-ի գլխավոր զոհերից Վազգեն Սարգսյանի եղբոր՝ նախկին վարչապետ Արամ Սարգսյանի հայտարարությունն այն մասին, որ Մեղրու փոխանակման վերաբերյալ բանակցություններ եղել են, եւ Վազգեն Սարգսյանն ու Կարեն Դեմիրճյանը կտրականապես դեմ են եղել այդ ծրագրին: Սրան հաջորդում է ոչ անհայտ Աշոտ Մանուչարյանի պնդումը, թե հենց դրա համար էլ Ազգային ժողովում գնդակահարվել են հանրապետության առաջին դեմքերը: Ուշագրավն այն է, որ նախկին վարչապետը նոյեմբերի 27-ի եւ Մեղրու վերաբերյալ գործարքի միջեւ կապի առկայության մասին միանշանակ պնդում չի կատարում: Նա գտնում է, որ պետք է հանձնաժողով ստեղծվի, որտեղ փաստեր ունեցողը կարող է ներկայացնել դրանք:

Ընդհանրապես, Մեղրու եւ Զանգեզուրի նկատմամբ աշխարհաքաղաքական նկրտումները տխրահռչակ Գոբլից չեն սկսվում: Ադրբեջանցի մուսավաթականները նույնիսկ հատուկ հասկացություն ունեն խնդրի վերաբերյալ «այդ անիծյալ հայկական սեպը»: Նկատի ունեն, որ Նախիջեւանը եւ Լեռնային Ղարաբաղը զավթելուց հետո Զանգեզուրը դարձավ սեպ, որը խրված մնաց երկու բռնագրաված երկրամասերի միջեւ. եվ պանթուրքիստների սերունդները երազեցին վերացած տեսնել Թուրքիան Ադրբեջանից բաժանող վերջին խոչընդոտը: Այժմ, երբ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորումը դարձել է միջազգային ատյանների խնդիրը, նրանք հրապարակ են նետում տարբեր առաջարկներ («ընդհանուր պետության» գաղափարից մինչեւ տարածքների փոխանակման տարբերակը), փորձում են շոշափել հակադրված կողմերի քաղաքական տրամադրությունները: Ինչպես տեսնում ենք՝ միջազգային միջնորդները մեծ հաջողությունների չեն հասել: Հարեւան երկրում կտրականապես մերժում են «ընդհանուր պետության» հայեցակարգը, թեկուզ այն հիման վրա, որ խոսքը տվյալ դեպքում Արցախի եւ Ադրբեջանի իրավահավասար գոյության մասին է: Սա այն դեպքում, երբ Բաքվում երազում են օր առաջ հողին հավասարեցված տեսնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Նրանք «հանրապետություն» բառից սարսափում են, ինչպես սատանան կրակից:

Իր հերթին Հայաստանն էլ կտրուկ մերժել է Մեղրու փոխանակման վերաբերյալ առաջարկը: Տվյալ դեպքում ծիծաղելին այն է, որ միջազգային միջնորդների կողմից արված առաջարկության համար ներկա իշխանությունների հակառակորդները փորձում են մեղադրել այդ իշխանություններին: Ասում են, թե իրենց իշխանության օրոք նման առաջարկ կամ տարբերակ չի եղել, այսինքն՝ տեսեք-տեսեք, մենք ինչքան լավն ենք ներկաներից: Բայց, պարոնայք, մի մոռացեք,



որ ձեր ժամանակ կազմվում էին Արցախի ազատագրված հողերը հանձնելու, պատերազմում փախստական դարձած անձանց վերադարձնելու զանազան ժամանակացույցեր: Այլ կերպ ասած դա այն ժամանակ էր, երբ միջազգային միջնորդներն աշխատում էին դիվանագիտական ճանապարհով չեզոքացնել պատերազմի արդյունքները եւ հասնել արցախյան կնճռի հարթեցմանը հօգուտ Բաքվի: Դա չստացվեց ու չէր էլ կարող ստացվել... Այդ ժամանակ հրապարակ բերվեց տարածքների փոխանակման միտքը: Հայաստանում ոչ մի նորմալ քաղաքական գործիչ չէր կարող մտածել անգամ Մեղրին հանձնելու մասին: Կարելի է ասել, որ Վազգեն Սարգսյանի ու Կարեն Դեմիրճյանի կողմից առաջարկի մերժումը ոչ թե բացառիկ է, այլ օրինաչափ: Առաջարկը կտրականապես մերժել է նաեւ նախագահը, ինչը վերստին հաստատեց պետության ղեկավարի մամլո ծառայությունը՝ նախկին վարչապետ Արամ Սարգսյանի վերջին հայտարարության առնչությամբ:

Այս ամենից հետո, երբ թվում է՝ պարզաբանումները արված են, ու կանխավ պարզ էր, որ Հայաստանում չէին կարող լինել տարածքների փոխանակման կողմնակիցներ, կան անուղղելի անձինք ու խմբեր, որոնք հարցը «քնած» չեն թողնում: Պարտություն կրելով քաղաքական դաշտում, չկարողանալով ձեւավորել ընդդիմադիր մեծ շրջանակ, անկարող լինելով ոտքի հանել ժողովրդի լայն խավերին, բայց ունենալով մի սեւեռուն գաղափար՝ վերատիրանալ պետության ղեկին՝ նախկինները ոչինչ չեն խնայում հատկապես նախագահին հերթական անգամ վարկաբեկելու համար: Մարդիկ, որոնք պաշտոնական մակարդակում պատրաստվում էին Արցախը հանձնել Ադրբեջանին, այսօր, արդարամիտ ու ազգասերի պատմուճան հագած, սուր են ճոճում չեղած բանի համար: Իհարկե, աներեւակայելի դժվար է ժողովուրդ հավաքել եւ բարոյական խոսք ասելու շատ դյուրին է, աննկատ մնալով, քաղաքական մթնոլորտը թունավորել զանազան հերյուրանքներով:

Պարոնայք, մոռացեք Մեղրին. դրա շահարկումը կատարելապես սպառել է իրեն, վերջապես խաղաղվեք, Հայաստանը ոչ մի թիզ հող էլ չունի օտարին տալու: Ավելի լավ է խորհեք ձեր քաղաքական շրջապատի բարոյաքաղաքական անկման մասին. մի կուսակցության նախագահը ծանրագույն ոճրագործությունների համար փախուստի մեջ է, մյուսը մեծ չափերի հասնող յուրացումների համար հայտնվել է բանտի ճաղերի հետեւում: Միեւնույն է, որքան էլ փորձեք ձեր քարոզչական խոսքին սրություն հաղորդել, ժողովուրդը, քաղաքական գործիչներն ու անհատները տեսնում են ձեր գործերը, որոնք մութ են եւ լուսավորելու կարիք ունեն...